

ԳՐԱՆՅՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

2 դեկտեմբերի 2008թ.

Կենտրոնական բանկի նախագահ

.....Արթուր Չավադյան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Կանոնների նպատակը

1.1 Սույն կանոնների նպատակը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) պաշտոնատար անձանց և աշխատակիցների, ինչպես նաև Դեպոզիտարիայի հաշվարկային համակարգի անդամների (այսուհետ՝ Անդամ) կամ նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց մասնագիտական էթիկայի և վարվելակերպի կանոնների սահմանումն է:

Հոդված 2. Կանոններում օգտագործվող հասկացությունները

2.1. Սույն կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

2.1.1. **«Արժեթղթերի հաշվարկային համակարգ»** - արժեթղթերի հաշվարկային համակարգն «Արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին» կանոնակարգով սահմանված կարգով արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող վարչական, տեխնիկական և իրավական միջոցների ամբողջությունն է:

2.1.2. **«Համակարգի անդամ»**. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ դառնալու իրավունք ունեցող անձ, որը «Արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին կանոնակարգ»-ի համաձայն կնքել է համապատասխան պայմանագիր Դեպոզիտարիայի հետ:

2.1.3. **Հաճախորդ** - Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը Դեպոզիտարիայի կամ Համակարգի անդամի հետ կնքել է համապատասխան պայմանագիր կամ ցանկացած թողարկող, որը Դեպոզիտարիայի հետ կնքել է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման մասին համապատասխան պայմանագիր:

2.1.4. **Մասնագիտական էթիկա** - բարեխղճության, օրինականության, հաճախորդի շահերի գերակայության, արհեստավարժության, անկախության, թափանցելիության և փոխհամագործակցության սկզբունքների հիման վրա՝ ՀՀ օրենսդրության և Դեպոզիտարիայի կանոններին համապատասխան Դեպոզիտարիայի կողմից սահմանված վարքագծի էթիկայի չափանիշներ:

2.2. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նշանակությունները:

Հոդված 3. Կանոնների կիրառման ոլորտը

3.1. Սույն կանոնները գործում են Դեպոզիտարիայի և Համակարգի անդամի (այսուհետ՝ Անդամ) նկատմամբ իրենց գործունեությունն իրականացնելիս, ինչպես նաև միմյանց, իրենց հաճախորդների և այլ անձանց հետ փոխհարաբերությունների ընթացքում:

Գլուխ 2. Մասնագիտական էթիկայի նորմեր

Հոդված 4. Մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքները

4.1. Գեպոզիտարիայի և Անդամի մասնագիտական էթիկայի սկզբունքները սահմանում են նրա գործունեության բարոյական հիմքերը, որոնք ընդունվում ու պահպանվում են Գեպոզիտարիայի և Անդամի պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից իրենց ամենօրյա գործունեության ընթացքում:

4.2. Գեպոզիտարիայի և Անդամի մասնագիտական էթիկայի սկզբունքները հիմնվում են հանրության բարոյական պահանջների և չափանիշների վրա, ելնելով Գեպոզիտարիայի և Անդամի ընդհանուր շահերից, օրինականության և արդարության պահպանման անհրաժեշտությունից:

4.3. Մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքներն են՝

- 4.3.1. բարեխղճությունը.
- 4.3.2. օրինականությունը.
- 4.3.3. հաճախորդի շահերի գերակայությունը.
- 4.3.4. արհեստավարժությունը.
- 4.3.5. անկախությունը.
- 4.3.6. թափանցիկությունը.
- 4.3.7. փոխհամագործակցությունը:

Հոդված 5. Բարեխղճությունը

5.1. Գեպոզիտարիան և Անդամը արժեքների շուկայում պետք է գործառույթներն իրականացնեն բարեխղճորեն, այսինքն՝ լիարժեքորեն գործադրեն իրենց մասնագիտական հմտությունը, փորձը և գիտելիքները, ինչպես նաև գործեն այնպիսի շրջահայացությամբ և պատասխանատվությամբ, որոնք անհրաժեշտ են հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

5.2. Գեպոզիտարիան և Անդամը, ելնելով հաճախորդի շահերից, պարտավոր են բարեխղճորեն իրականացնել վերջինիս հետ կնքված պայմանագրից բխող պարտականությունները, այդ թվում հետևողականություն ցուցաբերել հաճախորդների հետ կնքված պայմանագրերով սահմանված պահանջների պահպանման հարցում.

5.3. Գեպոզիտարիան և Անդամը իրավունք չունեն՝

- 5.3.1. ոտնահարել հաճախորդի շահերն ու իրավունքները,
- 5.3.2. հաճախորդի հետ համապատասխան պայմանագրեր կնքելիս և հետագայում այդ պայմանագրերի համաձայն ծառայությունների մատուցման ընթացքում չարաշահել հաճախորդի անտեղյակությունը, չիմացությունը կամ անփորձությունը:

Հոդված 6. Օրինականությունը

6.1. Իրենց գործունեությունն իրականացնելիս Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են անշեղորեն պահպանել Օրենքի, Կենտրոնական բանկի որոշումների և Գեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջները, ինչպես նաև բոլոր հնարավոր ողջամիտ և օրինական միջոցներով պահանջել իրենց հաճախորդներից դրանց պահպանումը:

6.2. Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են գրավոր հիմնավորմամբ հրաժարվել հաճախորդի կողմից տրված հանձնարարությունների կատարումից, եթե դրանք

հակասում են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներով, դրանցից բխող այլ իրավական ակտերով կամ Դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջներին:

Հոդված 7. Հաճախորդի շահերի գերակայությունը

- 7.1. Դեպոզիտարիան և Անդամը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդներից ստացված հանձնարարականները պարտավոր են կատարել առաջնահերթ կարգով՝ ըստ դրանց ստացման հաջորդականության:
- 7.2. Դեպոզիտարիան և Անդամը պետք է բոլոր հնարավոր օրինական միջոցներով խուսափեն շահերի բախումից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տեղեկացնեն հաճախորդին այդ մասին և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ օրինական և ողջամիտ միջոցառումները շահերի բախումը հաճախորդի օգտին լուծելու նպատակով, թույլ չտան սեփական շահերի բավարարում՝ հաճախորդի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման հաշվին:

Հոդված 8. Արհեստավարժությունը

- 8.1. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են ապահովել իրենց աշխատակիցների կողմից սույն կանոնների պահպանումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդներին ծառայություններ մատուցելու համար ներգրավել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և պատրաստվածություն ունեցող՝ սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող մասնագետների:

Հոդված 9. Անկախությունը

- 9.1. Դեպոզիտարիան և Անդամը իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են թույլ չտալ այլ անձանց կողմից իրենց որոշումների վրա ազդելու և ճնշում գործադրելու հնարավորություն և/կամ նրանցից կախվածություն, որը կարող է վնաս հասցնել իրենց հաճախորդներին:

Հոդված 10. Թափանցիկությունը

- 10.1. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են Օրենքով, այլ իրավական ակտերով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով ապահովել համապատասխան տեղեկատվության տրամադրումը դրանց ստացման իրավասություն ունեցող անձանց:
- 10.2. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին, դրանցից բխող այլ իրավական ակտերին և Դեպոզիտարիայի կանոններին համապատասխան պահպանել իրենց գործունեության իրականացման արդյունքում իրենց հայտնի դարձած ծառայողական և/կամ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության գաղտնիությունը:

Հոդված 11. Փոխհամագործակցությունը

- 11.1. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են պատասխանատու և բարյացկամ վերաբերմունք ցուցաբերել իրենց հաճախորդների, ինչպես նաև այլ անձանց նկատմամբ:

- 11.2. Գեպոզիտարիան կամ Անդամը պարտավոր են գերծ մնալ որևէ Անդամի գործունեության հրապարակային անհիմն քննադատությունից և քննարկումից, ինչպես նաև թույլ չտալ այլ գործողություններ, որոնք կարող են արատավորել նրա գործարար համբավը:
- 11.3. Եթե Անդամի հաճախորդը հանդիսանում է նաև մեկ այլ Անդամի հաճախորդ, ապա նշված անձինք իրավունք չունեն խտրականություն կամ ճնշում ցուցաբերել հաճախորդի նկատմամբ, ինչպես նաև վարկաբեկել նրան կամ միմյանց:
- 11.4. Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են բարեխղճորեն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր պարտավորությունները:

Գլուխ 3. Գեպոզիտարիայի և Անդամի գործունեության իրականացման նորմեր

Հոդված 12. Գործունեության իրականացման ընդհանուր սկզբունքները

- 12.1. Գեպոզիտարիան և Անդամը պետք է պահպանեն բարեխիղճ և արդար գործունեության իրականացման սկզբունքները:
- 12.2. Գեպոզիտարիայի կամ Անդամի կողմից իրականացվող գործունեությունը համարվում է բարեխիղճ, եթե Գեպոզիտարիան կամ Անդամը.
 - 12.2.1. բարեխղճորեն և ազնիվ իրականացնում է իր հաճախորդների հանձնարարականները և արժեթղթերով իրականացվող գործառնություններից բխող պարտականությունները.
 - 12.2.2. իր հաճախորդներին տրամադրում է արժեթղթերով իրականացվող գործառնություններից բխող պարտականությունների և հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը.
 - 12.2.3. կատարում է իր հաճախորդների հանձնարարականները՝ ըստ դրանց ստացման հաջորդականության.
 - 12.2.4. ապահովում է հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների պատշաճ պահպանումը, դրանց անվտանգությունը և առանձին հաշվառումը.
 - 12.2.5. հաստատում է գրանցամատյանների վարման և ներքին հաշվառման ընթացակարգեր և կանոններ ՀՀ օրենսդրությանը և Գեպոզիտարիայի կանոններին համապատասխան.
 - 12.2.6. պահպանում է ՀՀ օրենսդրության և Գեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ պահանջները:
- 12.3. Իրենց գործունեության ընթացքում Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են պահպանել սույն կանոնների 2-րդ գլխում նշված էթիկայի նորմերը:
- 12.4. Անդամը պարտավոր է իր մասնագիտական գործունեությունը իրականացնել արժեթղթերի շուկայում մասնագիտացված այլ անձանց միջև բարեխիղճ մրցակցության և համագործակցության հիման վրա:
- 12.5. Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են իրենց հաճախորդներին տեղեկացնել նրանց հանձնարարականների կատարման ընթացքի մասին:
- 12.6. Գեպոզիտարիան և Անդամը պարտավոր են հատուցել իրենց հաճախորդների վնասները, որոնք առաջացել են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Գեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջների խախտումներով գործելու արդյունքում:

Հոդված 13. Հաճախորդների հետ բարեխիղճ աշխատանքի նորմերը

- 13.1. Իրենց գործունեությունն իրականացնելիս Դեպոզիտարիան և Անդամը պետք է ուշադիր լինեն իրենց հաճախորդների նկատմամբ, նրանց հետ աշխատանքի ընթացքում հաշվի առնեն ծառայությունների մատուցման հետ կապված հաճախորդների ցանկությունները և պահանջները, պահպանեն մասնագիտական էթիկայի և բարեխիղճ գործունեության վերաբերյալ Դեպոզիտարիայի կողմից ընդունված կանոնները և չափանիշները, ապահովեն և վերահսկեն դրանց կիրառումն իրենց ամենօրյա աշխատանքի ընթացքում:
- 13.2. Անդամն իրավունք չունի երաշխիքներ կամ խոստումներ տալ իր հաճախորդին վերջինիս դրամական միջոցների ներդրումից սպասվելիք եկամուտների վերաբերյալ:
- 13.3. Դեպոզիտարիայի կամ Անդամի կողմից իր հաճախորդի համար գործարք իրականացնելիս բավարար ջանքեր չկիրառելը դիտարկվում է որպես սույն կանոնների 12.1. կետով սահմանված պահանջի խախտում:

Հոդված 14. Ծառայությունների դիմաց վճարը

- 14.1. Հաճախորդի կողմից Անդամին ծառայությունների դիմաց վճարվող գումարը պետք է համապատասխանի մատուցվող ծառայությունների ծավալին և որակին: Վճարի մեծությունը կարող է կախված լինել մատուցվող ծառայությունների բարդությունից և ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերից:
- 14.2. Համակարգի անդամը պարտավոր է իր հաճախորդների հետ նախապես համաձայնեցնել և գրավոր ամրագրել մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող վճարումների պայմանները և կարգը:

Գլուխ 4. Աշխատակիցներին ներկայացվող պահանջներ

Հոդված 15. Ընդհանուր պահանջները

- 15.1. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են համապատասխան հաստիքացուցակի համաձայն գործունեության իրականացման համար ներգրավել այն ֆիզիկական անձանց, որոնք ունեն անհրաժեշտ կրթություն և Օրենքով սահմանված դեպքերում՝ մասնագիտական որակավորում:
- 15.2. Համակարգի անդամին արգելվում է թույլատրել հաճախորդի մասնագիտական սպասարկումը համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող անձանց կողմից: Սույն դրույթը չի սահմանափակում Անդամի հսկողության ներքո գործող՝ որակավորում չունեցող անձանց ներգրավումը հաճախորդին մասնագիտացված ծառայությունների մատուցման գործընթացում:
- 15.3. Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք կապահովեն՝
 - 15.3.1. աշխատակիցների կողմից ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարում.
 - 15.3.2. իր աշխատակիցների մասնագիտական որակավորման և պատրաստվածության բարձրացում.
 - 15.3.3. տեխնիկական սարքավորումներով, ուսումնամեթոդական և տեղեկատվական հրապարակումներով, ՀՀ օրենսդրությամբ, Դեպոզիտարիայի կանոններով և այլ անհրաժեշտ նյութերով ապահովվածություն:

15.4. Եթե Անդամի աշխատակիցները որևէ պատճառով չեն բավարարում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա Անդամը պարտավոր է տեղեկացնել այդ մասին Դեպոզիտարիային և ձեռնարկել օրինական միջոցառումներ նշված անհամապատասխանությունը վերացնելու նպատակով:

Հոդված 16. Աշխատակիցների ծառայողական էթիկան

16.1. Դեպոզիտարիայի կամ Անդամի աշխատակիցները, որոնք գործունեության իրականացման ժամանակ լիազորված են ներկայացնելու Դեպոզիտարիայի կամ Անդամի շահերը և/կամ իրենց պաշտոնական պարտականություններին համապատասխան ապահովում են Դեպոզիտարիայի կամ Անդամի գործունեության իրականացումը, պարտավոր են.

16.1.1. բարեխղճորեն իրականացնել իրենց պարտականությունները.

16.1.2. նպաստել Դեպոզիտարիայի կամ տվյալ Անդամի գործունեության զարգացմանը.

16.1.3. միմյանց, ինչպես նաև հաճախորդների, դրանց ներկայացուցիչների, այլ Անդամների պաշտոնատար անձանց և այլ աշխատակիցների նկատմամբ ցուցաբերել քաղաքավարի և գործնական վերաբերմունք:

16.2. Դեպոզիտարիայի կամ Անդամի աշխատակիցների միջև հարաբերությունները պետք է առաջնահերթ կարգով հիմնվեն արժեթղթերի շուկայում ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման համար փոխադարձ պատասխանատվության սկզբունքի վրա:

16.3. Դեպոզիտարիայի կամ Անդամի աշխատակիցները, որոնք իրենց պաշտոնական իրավասության շրջանակներում տիրապետում են գաղտնի և/կամ ծառայողական տեղեկատվությանը պարտավոր են բացառել նշված տեղեկատվության փոխանցման հնարավորությունը երրորդ անձանց: Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են միջոցներ ձեռնարկել՝ նշված տեղեկատվության ստացման նպատակով տվյալ աշխատակցի վրա ճնշում գործադրելը բացառելու նպատակով:

16.4. Դեպոզիտարիայի կամ Անդամի աշխատակիցը աշխատանքի մեկ այլ վայր, այդ թվում նաև մեկ այլ Անդամի մոտ աշխատանքի փոխադրվելիս պարտավոր է ձեռնպահ մնալ նախորդ աշխատավայրի ղեկավարների և աշխատակիցների գործունեության հրապարակային անհիմն քննադատությունից կամ գովաբանումից, իր պարտականությունները կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական, ներքին և/կամ գաղտնի համարվող տեղեկությունների քննարկումից, իսկ վերջիններս պարտավոր են ձեռնպահ մնալ երրորդ անձանց հետ իրենց նախկին աշխատակիցների մասնագիտական և անձնական հատկանիշների քննարկումից:

16.5. Դեպոզիտարիան և Անդամը իրավունք չունեն շահադիտական նպատակներով օգտագործել իրենց հայտնի դարձած՝ այլ Անդամի հետ առնչվող գաղտնի և/կամ ծառայողական տեղեկատվությունը:

16.6. Ծառայողական և գաղտնի տեղեկատվության անմատչելիությունը և պաշտպանվածությունն ապահովելու և Անդամի աշխատակիցների կողմից դրա տարածումը, հրապարակումը, այլ անձանց փոխանցումը կամ իր կողմից շահադիտական նպատակներով օգտագործումը կանխելու նպատակով Դեպոզիտարիան և Անդամը պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպության տարածքում գտնվող համակարգչային և այլ տեխնիկայի անվտանգության, տեղեկատվության փաստաթղթային և

էլեկտրոնային կրիչների, տվյալների անվտանգության ապահովման և մատչելիության սահմանափակման նպատակով:

Գլուխ 5. Գովազդի իրականացման նորմեր

Հոդված 17. Գովազդին ներկայացվող պահանջները

- 17.1. Գեպոզիտարիայի կամ Անդամի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև նրանց կողմից կամ նրանց անունից պատրաստված և տարածվող այլ գովազդը պետք է համապատասխանի գովազդի մասին օրենսդրությամբ, սույն կանոններով և Գեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված պահանջներին:
- 17.2. Սույն հոդվածով սահմանված պահանջների պահպանման նպատակով՝ Գեպոզիտարիայի կամ Անդամի կողմից կամ իրենց անունից տարածվող գովազդը պետք է անցնի ներքին հսկողության ընթացակարգով:
- 17.3. Գեպոզիտարիայի կամ Անդամի կողմից մատուցվող ծառայությունների գովազդը պետք է բացառի երրորդ անձանց խաբեության կամ մոլորության մեջ գցելու, ինչպես նաև այլ անձանց նկատմամբ անվստահության ստեղծման ցանկացած հնարավորություն:
- 17.4. Անդամին արգելվում է գովազդի տարածումը, որը պարունակում է.
 - 17.4.1. անհիմն ինքնագովազդ, ինչպես նաև համեմատություններ այլ Անդամի կամ մասնագիտացված անձանց հետ.
 - 17.4.2. կեղծ, խեղաթյուրված, ոչ լիարժեք կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որը նպատակ ունի կամ կարող է մոլորության մեջ գցել, ապակողմնորոշել կամ ճնշում գործադրել հաճախորդների կամ այլ անձանց վրա.
 - 17.4.3. գաղտնի չհամարվող, սակայն հաճախորդին վարկաբեկող տեղեկություններ:
- 17.5. Անդամը իրավունք չունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարձատրել զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցներին՝ նպատակ ունենալով զանգվածային լրատվության միջոցում հրապարակել իր մասին գովազդ չհանդիսացող բարենպաստ տեղեկություն:
- 17.6. Անդամին արգելվում է.
 - 17.6.1. գովազդում ոչ հավաստի տեղեկատվություն տալը, ինչպես նաև այլ տեղեկության հրապարակումը, որի նպատակն է արժեթղթերի սեփականատերերին և արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց խաբելը, ապակողմնորոշելը կամ մոլորության մեջ գցելը.
 - 17.6.2. օգտագործել գովազդը անբարեխիղճ մրցակցության նպատակով՝ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ անձի կամ անձանց գործունեության մեջ առկա թերությունների վերաբերյալ գովազդում զետեղելու միջոցով.
 - 17.6.3. գովազդի միջոցով խորհրդատվական ծառայություններ մատուցելը կամ առաջարկություններ կատարելը:

Գլուխ 6. Անցումային դրույթներ

Հոդված 18. Սույն կանոնների ուժի մեջ մտնելը

- 18.1. Սույն կանոնները և դրանցում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից :
- 18.2. Սույն կանոնները և դրանցում փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում դրանց գրանցման պահից :

Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
Դիտորդ խորհրդի 13.06.2008թ.
թիվ 3 որոշմամբ

Յոհան Ֆրեդիոլմ